Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ. հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Կիբերբուլինգի կանխարգելումը ԹԳՀԳ –ի դասին
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Հասմիկ Մարդանյան Սուրեն Ուսուցիչ +37493144100 hasmikmardanyan5@gmail.com Ինֆորմատիկա, Մաթեմատիկա 5-9-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Երևանի Նվեր Սաֆարյանի անվան թիվ 164 դպրոց Նոր Նորքի 2-րդ զծ., Թոթովենցի 7 (010) 629580 school164ns@yandex.ru

Բովանդակություն

Ներածություն **3**

Հիմնական բովանդակություն **6**

Եզրակացություններ, առաջարկություններ **14**

Օգտագործված գրականության ցանկ **15**

Հավելվածներ 16

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	**Նախաբան** Այսօր ատելության խոսքի տարածումը դարձել է շատ լուրջ մարտահրավեր ամբողջ աշխարհի համար: Նույնիսկ ՄԱԿ-ն անմասն չի մնացել այդ խնդրի դեմ պայքարին: Ատելության խոսք է համարվում «ցանկացած բանավոր հաղորդակցություն, գրավոր խոսք կամ վարքագիծ, որ ոտնձգություն կամ նվաստացուցիչ կամ խտրական լեզու է կիրառում՝ ուղղված անձին կամ խմբին»: Ատելության խոսքի տարածումն այսօր դարձել է համաշխարհային խնդիր, այդ իսկ պատճառով պետությունները և միջազգային կազմակերպությունները սկսել են ակտիվ պայքար մղել դրա դեմ: Այն չի շրջանցել նաև ՀՀ տարածաշրջանը՝ արմատավորելով վիրավորանք, զրպարտություն, բռնության կոչեր և այլն: Այս ամենը հասարակության համար լուրջ սպառնալիքներ են, և դրանց դեմ պայքարն օրակարգային է, հատկապես խոցելի է դեռահասների թիրախային խումբը: Ատելության խոսքին վերաբերող խնդիրները հնարավոր չէ արագ լուծել, միևնույն ժամանակ շատ կարևոր է հիշել, որ դա այլևս ներպետական խնդիր չէ. այն դարձել է համընդհանուր մարտահրավեր: ***Հետազոտության նպատակը և խնդիրները***. • բացահայտել կիբերբուլինգի երևույթները 7-րդ դասարանի թիրախային խմբում • սովորեցնել կիբերբուլինգի և կիբերհարձակման դեմ պայքարի միջոցները ***Հետազոտական հարց՝*** Ի՞նչ մեթոդներով կանխարգելել կիբերբուլինգի վտանգները 7-րդ դասարանի թիրախային խմբում:

Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	• թվային և մեդիակարողունակություն • ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն • սովորել սովորելու կարողունակություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	7-րդ դասարան, 21 աշակերտ՝ 10 աղջիկ 11 տղա
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Հետազոտության ընթացքում իրականացվել է. • որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով • քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, • հայտորոշում՝ թեստի միջոցով:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	20. 09 – 05. 10 2023թ.

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ

- Մեջբերումներ արդեն արված հետազոտությունների ց,
- Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:

Պարտադիր է կատարել հղում աղբյուրին

Ի՞նչ է բուլինգը

1.1 Բուլինգ, կիբերբուլինգ և կիբերհարձակում

Բուլինգի սահմանումն առաջին անգամ տրվել է դեռևս 1973 թ-ին, երբ Դ. Օլվեուսն այն սահմանեց անընդհատ կրկնվող ագրեսիվ վարքի տեսակ: Ըստ հեղինակի, դրսևորման ձևերն են՝ վիրավորանք, ֆիզիկական, հոգեբանական բռնություն և այլն: Ֆիզիկական բռնությունը գործադրվում է անձի հանդեպ, իսկ հոգեբանականը կարող է տեսանելի չլինել , մի կողմից անձին կարող են ծաղրել, մյուս կողմից՝ բացասական լուրեր տարածել՝ փորձելով նպաստել վերջինիս միջավայրից օտարացմանը:

Ֆիզիկական բուլիգը բնորոշ է տղաներին, իսկ անուղղակի բուլինգը՝ աղջիկներին, այն կարող է դրսևորվել բամբասանքի, ինչ որ մեկի հետ չշփվելու ձևով:

Վերջին ժամանակներում շատ տարածված է կիբերբուլինգը՝ ինտերնետային բուլինգը, որի դեպքում հոգեբանական բռնություն է գործադրվում անձի վրա հաղորդագրությունների, համացանցում ծաղրելու միջոցով:

«Կիբերբուլինգ» տերմինը հոգեբանների շրջանում հայտնվեց 1990-ականների երկրորդ կեսին: Արդեն այն ժամանակ նկարագրվում էին համացանցային կայքերում բուլիինգի դեպքերը. միմյանց հետ հաշիվներ մաքրելու համար դպրոցականները սկսեցին ընտրել հեռահար փոխգործակցությունը: Կիբերհարձակումը ցանկացած երկրում խնդիր է: Էլեկտրոնային եղանակով ուղարկված ցանկացած նվաստացուցիչ, վիրավորական կամ սպառնալից հաղորդագրություն համարվում է

կիբերհարձակում: Սա ներառում է նաև նվաստացուցիչ լուսանկարներ կամ տեսանյութեր, որոնք հրապարակվում են Facebook կամ YouTube սոցիալական այլ ցանցերում՝ առանց զոհի համաձայնության: Կեղծ սոցիալական մեդիայի պրոֆիլները կամ վեբկայքերը, որոնք ստեղծվել են զոհին արատավորելու համար, նույնպես պատկանում են կիբերհարձակման կատեգորիային: Թեև կիբերահաբեկիչների կողմից կիրառվող գործիքներն ու մարտավարությունը ակնհայտ են, առաջին հայացքից կիբերհարձակման դեմ պայքարի ամենամեծ դժվարությունը ամոթխած կամ վախեցած զոհերի կողմից կիբերհարձակման զոհ լինելն է:

1.1 Կիբերբուլինգի և կիբերհարձակման դրսևորումները

Կիբերհարձակման հետևանքները հաճախ ունենում են տխուր կամ նույնիսկ մահացու ելք:
Կիբերհարձակումը թվային տեխնոլոգիաների կիրառմամբ ահաբեկումն է: Դա կարող է տեղի ունենալ սոցիալական լրատվամիջոցներում, հաղորդագրությունների հարթակներում, խաղային հարթակներում և բջջային հեռախոսներում: Դա կրկնվող վարքագիծ է, որը նախատեսված է վախեցնելու, զայրացնելու կամ ամաչեցնելու նրանց, ում հետապնդում են: Օրինակ.

- ✓ սոցցանցերում կեղծ տեղեկություններ տարածելը կամ ինչ-որ մեկի ամոթալի լուսանկարները տեղադրելը
- ✓ ուղարկելով վնասակար հաղորդագրություններ կամ սպառնալիքներ հաղորդագրություններ հարթակների միջոցով
- ✓ անձնավորել ինչ-որ մեկին և նրանց անունից ստոր հաղորդագրություններ ուղարկել ուրիշներին:

Խնդիրն այն է, որ երեխաները ամենից հաճախ փորձում են լռել առցանց ոտնձգությունների մասին: Դատելով հետազոտությունից՝ հինգ ծնողներից միայն մեկն է տեղյակ կիբերհարձակման մասին (21%), իսկ կեսից ավելին վստահ է, որ իրենց երեխան երբեք նման ռիսկի չի ենթարկվել (61%):

Եթե նկատում եք, որ ձեր երեխան սկսել է տարօրինակ վարքագիծ դրսևորել, նրա անձնական իրերը սկսել են անհետանալ, և նա ավելի ու ավելի քիչ ընկերներ ունի, դա անհանգստության տեղիք է տալիս: Եթե ահաբեկման փաստն ակնհայտ է դառնում, ապա ամենաանարդյունավետը բջջային հեռախոսների և ինտերնետի օգտագործման սահմանափակումն է: Խնդիրն ինքնին տեխնոլոգիան չէ: Խնդիրը բջջային հեռախոսը կամ ինտերնետը չէ, այլ դրանց անպատասխանատու և անուշադիր օգտագործումը:

Կիբերհարձակման վտանգները.

- զգացմունքային և հոգեբանական ազդեցություն
- ակադեմիական հետևանքներ
- ֆիզիկական առողջություն
- սոցիալական մեկուսացում
- երկարաժամկետ հետևանքներ
- զեկուցում և միջամտություն

Եզրափակելով, կիբերհարձակումը, այն զգալի վտանգ է ներկայացնում երեխայի հուզական և հոգեբանական բարեկեցության, ակադեմիական հաջողության և ընդհանուր զարգացման համար: Ծնողների և ուսուցիչների համար կարևոր է ակտիվ լինել կիբերհարձակման դեմ պայքարելու և կանխելու հարցում՝ երեխաների մտավոր և էմոցիոնալ առողջությունը պաշտպանելու համար:

1.2 Կիբերբուլինգի և կիբերհարձակման դեմ պայքարը

Որպեսզի պայքարենք կիբերբուլինգի դեմ, առաջին հերթին պետք է պարզել, թե որ հարթակում՝ Vkontakte, Instagram և այլն տեղի է ունենում ահաբեկում, որպեսի միջադեպի մասին տեղեկացնել սոցիալական ցանցի ներկայացուցիչներին:

Պետք է մտածել, թե ուրիշ ով կարող է տեղեկացված լինել իրավիճակի մասին: Դպրոցի տնօրենը պետք է տեղյակ լինի այս փաստի մասին, բացի այդ, նա կկարողանա ներգրավել դպրոցի հոգեբաններին խնդրի լուծման համար: Եթե դա չի օգնում, կարող է անհրաժեշտություն առաջանա դիմել ոստիկանության: Իրավախախտների հետ ինքնուրույն կարգավորելու փորձն ամենից հաճախ անօգուտ է և նույնիսկ կարող է վատթարացնել իրավիճակը:

Ցանկացած դեպքում պետք է պահպանել ապացույցները.

- ✓ պետք է պահպանել ահաբեկող նամակները կամ հաղորդագրությունները:
- ✓ օգնել երեխային փոխել սոցիալական մեդիայի պրոֆիլի կարգավորումները
- ✓ աջակցել երեխային
- ✓ ասել նրան, որ դա միայն իր մեղքով չէ:

Կարևոր է երեխային բացատրել, որ ինտերնետում պետք չէ շփվել անծանոթների հետ այնպես, ինչպես փողոցում անծանոթ մարդկանց հետ: Եթե ծնողը երեխայի հետ շփում ունի, որը ցավոք բոլոր ծնողների դեպքում չէ, խնդրել, որ անպայման տեղեկացված լինի իրավիճակի զարգացման մասին և չպատասխանեն վիրավորանքներին: Անհրաժեշտ է կարգավորեք երեխայի համակարգիչը՝ տեղադրել հակավիրուս, միացնել firewall-

ը, կարգավորել զննարկիչը: Բացատրել երեխային, որ նա պետք է անտեսի անծանոթ համարներից ստացված զանգերն ու SMS-ները: Տվել երեխային սահմանափակ հաշիվ:

Այժմ որոշ արևմտյան երկրներում կան նույնիսկ քրեական պատիժներ կիբերբուլինգի համար: Օրինակ՝ Գերմանիայում դրա համար մեղավոր ճանաչված չափահասը կարող է ստանալ մինչև 10 տարվա ազատազրկում, դեռահասը՝ մինչև 5 տարվա կալանք կամ հարկադիր աշխատանք:

Կիբերհարձակման կանխարգելումը պահանջում է բազմակողմանի մոտեցում՝ ներգրավելով ծնողներին, մանկավարժներին և համայնքին:

- *Կիբերհարձակումը կանխման ռազմավարություններ.*
  - կրթություն և իրազեկում
  - բաց հաղորդակցություն
  - կանոններ և սահմաններ
  - ծնողական վերահսկողության ծրագրակազմ
  - խթանել կարեկցանքը
  - լավ վարքագիծի մոդել
  - դպրոցական ներգրավվածություն
  - հաղորդել և արգելափակել
  - փաստաթղթային ապացույցներ
  - փնտրել մասնագետի օգնություն

Կիբերհարձակման կանխարգելումը պահանջում է ծնողների, մանկավարժների և համայնքի ակտիվ ջանքեր: Զարգացնելով հարգանքի և կարեկցանքի մշակույթը ինչպես օնլայն, այնպես էլ օֆլայն՝ մենք կարող ենք երեխաների համար ավելի ապահով թվային միջավայր ստեղծել:

Հետազոտության ընթացքը	**ՓԱՍՏԵՐ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԻԲԵՐՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ** Ofcom-ի երեխաների և ծնողների ՁԼՄ-ների օգտագործման վերջին զեկույցը ցույց է տալիս, որ 8-ից 17 տարեկան երեխաների 84%-ն ասում է, որ իրենք ենթարկվել են բռնության սոցիալական ցանցերում, տեքստային հաղորդագրություններում և այլ առցանց հարթակներում: Մեկ այլ հետազոտություն ցույց է տալիս, որ ծնողների 71%-ը մտահոգված է, որ իր երեխային առցանց ահաբեկում են իրենց ծանոթներից մեկը, 70%-ը մտահոգված է առցանց թրոլինգով, իսկ 66%-ը մտահոգված, որ իր երեխան ոտնձգությունների է ենթարկվում առցանց այլ երեխաների կողմից: Հետազոտողները պարզել են, որ. Հաճախ մարդը չի կարող իրեն պաշտպանել կիբերբուլինգից, և որ օգտատերերի միայն մի փոքր մասն է պատրաստ աջակցել առցանց ահաբեկման զոհին: Հետազոտողները պարզել են, որ. • հարցվածների 52%-ը երբեք չի պաշտպանել որևէ մեկին ինտերնետում, • 65%-ն անիմաստ է համարում հանրային աջակցությունը, • 13%-ը վախենում է, որ ագրեսիան կտարածվի իրենց վրա, • 20%-ը կարծում է, որ իրենք անզոր են և չեն կարող որևէ բան անել կիբերհարձակման զոհին աջակցելու համար: Հետազոտությունը կատարել եմ 7-րդ դասարանի աշակերտների հետ: **Փուլ առաջին՝** սկզբում զրույց եմ ունենեցել դասարանի հետ պարզելու արդյո՞ք տեղեկացված են կիբերբուլինգի մասին:

Փուլ երկրորդ՝ դասարանի ճշգրիտ տեղեկացվածությունը ստուգելու համար իրականացրել եմ հայտորոշում՝ թեստի միջոցով.

- գիտես ի՞նչ է կիբերբուլինգը և կիբերհարձակումը
- երբևիցէ ենթարկվե՞լ ես կիբերհարձակման
- կարո՞ղ ես պաշտպանվել կիբերհարձակումից

գիտես ի՞նչ է կիբերբուլինգը և կիբերհարձակումը	երբևիցէ ենթարկվե՞լ ես կիբերհարձակման	կարո՞ղ ես պաշտպանվել կիբերհարձակումից
25%	65%	10%

աղյուսակ1



գծապատկեր 1

Փուլ երրորդ՝ տեստի արդությունքը վերլուծելուց հետո, անհրաժեշտություն առաջացավ իրականացնել դասընթաց «Կիբերբուլինգ և կիբերհարձակում» թեմայով:

1. Դասընթացի ընթացքում երեխաներին ներկայացրել եմ կիբերբուլինգի վերաբերյալ իրավիճակային սահիկաշար:
2. Երեեխաների հետ անցկացրել եմ քննարկում, բացատրել եմ երևույթի բացասական հետևանքները և կանխարգելման միջոցները:

Քննարկման արդյունքում պարզ դարձավ, որ սովորողների մեծամասնությունը տեղեկացված չէր երևույթի մասին, իսկ մյուս մասը՝ պատկերացում ուներ կիբերբուլին գի մասին, սակայն չգիտեր անվանումը:

Այնուհետև իրականացրեցի ընթացիկ հայտորոշում: Ստորև ներկայացված է արդյունքները:

գիտես ի՞նչ է կիբերբուլինգը և կիբերհարձակումը	երբևիցէ ենթարկվե՞լ ես կիբերհարձակման	կարո՞ղ ես պաշտպանվել կիբերհարձակումից
90%	55%	90%

աղյուսակ2



գծապատկեր 2

Արդյունում ունեցանք իրազեկվածության աճ, որնը կարող է կանխարգելել և պաշտպանել սովորողներին կիբերբուլինգի վտանգներից:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Հետազոտությունը անցկացրել եմ դիտարկման մեթոդով: Հետազոտական աշխատանքի թեման արդիական է, հետաքրքիր և չափազանց կարևոր: Նպատակ դրեցի զարգացնել երեխաների թվային և մեդիա, ինքնաճանաչողական կոմպետենցիաները՝ ԹԳՀԳ առարկայի շրջանակներում: Խնդիրը ունի տարիքային առանձնահատկություն և հետաքրքրություն հաշվի առնելով այս ամենը անցկացրեցի նախնական և ընթացիկ հայտորոշում: Հայտորոշման վերլուծության արդյունքում կարողացա բացահայտել սովորողների իմացածի և չիմացածի սահմանները: Ճիշտ քայլարշավի արդյունքում սովորողները ամբողջական պատկերացում կազմեցին երևույթի մասին՝ ունեցանք իրազեկվածության և տեղեկացվածության զգալի աճ:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. https://dszn.ru/press-center/news/3547 8 мая 2020 года
2. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
3. https://www.internetmatters.org/ru/issues/cyberbullying/learn-about-it/
4. Խուդոյան Ա. Դեռահասների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց: Եր.: ՎԷԼԱՍ Պրինտ ՍՊԸ., 2018. 88 էջ
5. ԹԳՀԳ չափորոշիչ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180004
6. Հանրակրթության պետական չափորոշիչ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149788

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	